

ԱՐԵՒՍՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՄՔ Երկուշաբթի, 27 Յոկտեմբերի, 2008

ՀՀ Բիւրոյի անդամ, Դոկտ. Վիգէն Յովսէփեանը Լոսանջելոսահայ մտաւորականների ու լրատուամիջոցների ներկայացուցիչների առջեւ ունեցած ելոյթում յայտարարեց, որ պատմաբանների յաճնաժողովում Հայոց Ցեղասպանութիւնը քննարկելու թուրքիայի ներկայացրած առաջարկ-նախապայմանը այն անելը թակարդն է, որը միտում է ամիսներով եւ նոյնիսկ տարիներով, ձգձել մեր պահանջատիրական օրակարգի հարցերը եւ ջլատել ու քայքայել պահանջատիրութեանը լծուած մեր ուժերը: ՀՀ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական Կոմիտէի կենտրոնատեղիի ժողովարահում Երեքշաբթի, Յոկտեմբերի 21-ի երեկոյեան ժամը 7:45-ին տեղի ունեցած սոյն միջոցառման բացումը կատարեց Կենտրոնական Կոմիտէի անդամ ժամ Գոսազեանը, որը նշեց, թէ նկատի ունենալով, որ Դաշնակցութեան քաղաքական հիմնական ուղիների մշակումը պատկանում է ՀՀ Ընդհանուր ժողովին, բայց անմիջական ռազմավարութեան մշակումը ձեռնարկում է Բիւրոյի կողմից, որի անդամն է Դոկտ. Վիգէն Յովսէփեանը, ուստի Կենտրոնական Կոմիտէն իր Հանրային Կապի Յանձնախմբի գծով կազմակերպեց սոյն միջոցառումը, որպէսզի աւելի յստակօրէն ներկայացուի ՀՀ Դաշնակցութեան կեցուածքն ու մօտեցումները Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ յարաբերութիւններ հաստատուելու կապացութեամբ: Դոկտ. Վիգէն Յովսէփեանը իր զեկուցական ելոյթում հանգամանօրէն անդրադարձաւ հայ-թուրքական յարաբերութիւնների վերջին զարգացումներին, մասնաւորաբար շեշտը դնելով քաղաքական այն գործընթացների վրայ, որոնք արտաքին ճնշումների գծով իրագործուած են Հայաստանի իշխանութիւնների նկատմամբ, որպէսզի Հայաստանը ընդունի պատմաբանների յաճնախմբի ստեղծումը եւ ճանաչի Թուրքիայի տարածքային ամբողջականութիւնը, որով Հայաստանը փաստօրէն կը հրաժարուի տարածքային պահանջատիրութեան իր արդար իրաւունքից: «Դաշնակցութեան համար անընդունելի են այս զոյգ պայմանները, ինչպէս նաեւ անընդունելի է Դարաբաղեան բանակցութիւնները որեւէ ձեւով հայ-թուրքական յարաբերութիւնների գործընթացին առնչելը: Իսկ մասնաւորաբար անընդունելի է որեւէ նախապայման, առաջադրանք, որը կը միտի ինչ-որ կերպով, նոյնիսկ մէկ քայլով, մեզ հեռու պահել Հայոց Ցեղասպանութեան ճանաչման օրակարգից»,- նշեց Վիգէն Յովսէփեանը եւ կոչ ուղղեց թիկունք կանգնել Դաշնակցութեան սոյն կեցուածքներին, որպէսզի այդ հարցերի պայքարում Դաշնակցութիւնը առանձին չմնայ: «Մենք համոզուած ենք, որ եթէ ճիշտ դրուեն ու բանաձեւուեն հարցերը, ոչ միայն Սփիւռքի, այլ ընդհանրապէս հայութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կը մտածի նոյն ձեւով, ինչպէս մենք ենք մտածում: Այսինքն՝ ԱՅՈ հայ-թուրքական յարաբերութիւններին, բայց ՈՉ՝ ի խնդիր ազգային օրակարգերի»,- ընդգծեց ՀՀ Բիւրոյի անդամ Վիգէն Յովսէփեանը եւ հրաւիրեց հայ մտաւորականներին ու լրատուամիջոցների ներկայացուցիչներին, որ յօդուածներով, հրապարակային ելոյթներով, պաշտօնական ու հանրային հանդիպումներով հասարակական կարծիք ստեղծեն Հայ Դատի ու մեր համազգային օրակարգերի պարզաբանման ու զօրակցութեան օգտին: Այնուհետեւ առիթ տրուեց ներկաներին, որոնք հարցեր ուղղելով, մասնակցեցին քննարկումներին եւ ներկայացրեցին իրենց կարծիքները՝ ինչպէս հայ-թուրքական յարաբերութիւնների, այնպէս էլ սոյն հարցերում արեւմտեան երկրների ու Ռուսաստանի դերակատարութեան ու ներգրուման մասին: Հանդիպումը աւարտուեց երեկոյեան ժամը 10:15-ին:



Կիրակի, Յոկտեմբերի 12-ի երեկոյեան, աւելի քան 900 հիւրերի ու համակիրների մասնակցութեամբ, Միացեալ Նահանգների Երբեմնի նախագահ Ռանըլդ Ռէյզընի անուան գրադարանի շքեղ հանդիսարահում տեղի ունեցաւ ՀՀ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի տարեկան ճաշկերոյթ-հաւաքը, որի ընթացում մեծարուեցին Դեմոկրատական կուսակցութեան փոխնախագահական թեկնածու, Սենատոր Ջօ Բայդընը, Լոս Անջելոսի քաղաքապետ Անթոնիօ Վիարազոսան, հանգուցեալ նախագահ Ռանըլդ Ռէյզընը եւ Հայ Դատի Յանձնախմբի երկար տարիների պաշտպան Աշխէն Փիլաւջեանը: Միջոցառմանը ելոյթ ունեցաւ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետ Քէն Խաչիկեանը, որը խստօրէն քննադատեց Միացեալ Նահանգների արտաքին գործերի նախարարութեան պաշտօնեայ, Լեռնային Դարաբաղի հարցով ԵԱՀԿ-ի Մինսկի համանախագահ Մէթիու Բրայզայի կատարած վերջին հաստատումները: Քէն Խաչիկեանն ամերիկեան քաղաքականութեան համար «սկզբունքից նահանջ» որակեց Բրայզայի այն հաստատումը, թէ Հայաստանը պէտք է ընդունի, որ Լեռնային Դարաբաղը մաս է կազմում Ադրբեջանին: Ինչպէս շեշտեց Խաչիկեանը, մինչեւիսկ Բաքուի եւ Անկարայի իշխանութիւնները հասկանում են, որ Բրայզայի առաջարկը

անհիմն է: Աշխարհի իւրաքանչիւր ժողովուրդ իրաւունք ունի ազատօրէն ապրելու՝ իր կամքով ընտրուած կառավարութեան ղեկավարութեամբ,- յայտարարեց ՔԷՆ Խաչիկեանը: Լոս Անջելոսին մերձակայ Սիմի Վալիում տեղի ունեցած սոյն միջոցառմանը ներկայ էին Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Տան անդամներ Ադամ Շիֆը, Բրադ Շերմանը, որը Սենատոր Բայդընի կողմից ընդունեց Յայ Դատի Յանձնախմբի «Ազատութեան մրցանակը»: «Սենատոր Բայդընը խորապէս զգացուած է իրեն շնորհուած այս մրցանակի համար եւ խոստանում է շարունակել իր զօրակցութիւնը ամերիկահայ համայնքին յուզող հարցերի նկատմամբ»,- մրցանակն ընդունելիս յայտարարեց կոնգրեսական Բրադ Շերմանը: Միջոցառմանը մեծարանքի արժանացաւ նաեւ Լոս Անջելոսի քաղաքապետ Անթոնիօ Վիարագոսան, ստանալով «Տարուայ մարդը» շքանշանը: Իսկ Վուդրօ Վիլսոնի անուան մրցանակով մեծարուեց նախկին նախագահ Ռանըլդ Ռեզըն, որը հանդիսանում է Յայոց Ցեղասպանութիւնը հաստատած Միացեալ Նահանգների վերջին նախագահը:



Միացեալ Նահանգներ կատարած իր այցելութեան շրջանակում «Յամազգային»-ի Կենտրոնական վարչութեան Երեւանի գրասենակի վարիչ-տնօրէն, «Յամազգային»-ի Յայաստանի հիմնադրամի նախագահ՝ դոկտ. Լիլիթ Գալստեանը Երկուշաբթի, Յոկտեմբերի 13-ի երեկոյեան ժամը 8:30-ին, Գլենդելում գտնուող Ազգային առաջնորդարանի սրահում հանդիպում-զրոյց ունեցաւ շրջանի մշակութասեր մտաւորականութեան հետ, հիմնականում անդրադառնալով «Յամազգային»ի 80-ամեայ գործունեութեանն ու նուաճումներին: Միջոցառման բացումը կատարեց «Յամազգային»ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան ատենապետ դոկտ. Վիգէն Եազուպեանը, նշելով, որ սոյն հանդիպումը մաս է կազմում շրջանի «Յամազգային»-ի 80ամեակի տօնակատարութեանը նուիրուած զանազան ձեռնարկներին: Իր ելոյթի ընթացքում, դոկտ. Լիլիթ Գալստեանը յիշելով օրեր առաջ, Բոստոնում, Վաշինգտոնում, Նիւ Ջորջիում, Նիւ Եօրքում եւ Ֆիլադելֆիում յաջորդաբար ունեցած իր ելոյթներին, անդրադարձաւ «Յամազգային»-ի Յայաստանի մասնաճիւղի գործունեութեանը, որը իր ուրոյն տեղն ունի հայրենի մշակոյթի զարգացման գործընթացում: «Յամազգային»-ի Յայաստանի գրասենեակը «մշակութային կամուրջի դերակատարութիւնը է ստանձնել դրական կերպով ու մօտից գործակցելով հայրենի եւ սփիւռքեան բոլոր կառոյցների հետ», - նշեց Դոկտ. Լիլիթ Գալստեանը:



Կիրակի, Յոկտեմբերի 12-ին, Բըրբանքի «Գրոս» զբօսայգում տեղի ունեցաւ Բըրբանքի Յայ Կենտրոնի տարեկան առաջին փառատօնը, աւելի քան 500 անդամների մասնակցութեամբ: Փառատօնին հրաւիրուել էւ ողջոյնի խօսքերով հանդէս ես ելել ամերիկեան պետական բարձրաստիճան պաշտօնատարներ, որոնց թւում՝ կոնգրեսական Ադամ Շիֆը, Կալիֆորնիայի խորհրդարանի անդամ Փօլ Գրիգորեանը եւ այլոք: Փառատօնին ներկայ եւ գտնուել նաեւ ՅՅԴ Արեւմտեան Ամերիկայի Կենտրոնական կոմիտէի, ՅՕՄի Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութեան, եւ շրջանի ազգային ու հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչները:

Այս լուրերը տրամադրուում են
ՅՅԴ Արեւմտեան Ամերիկայի
Կենտրոնական կոմիտէի
Յանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations@ARF1890.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել: